ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՎԱԹԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Խորվաթիայի Հանրապետությունը, ցանկանալով կնքել եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագիր,

համաձայնեցին հետևյալի մասին.

## Հոդված 1
## ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

## Հոդված 2
## ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐԸ

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետության կամ իշխանության տեղական մարմինների կողմից եկամտի նկատմամբ կիրառվող հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամտից հարկեր են համարվում եկամտի ընդհանուր գումարից կամ եկամտի առանձին տարրերից, այդ թվում՝ շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտներից, ձեռնարկությունների վճարած աշխատավարձի կամ ռոճիկի ընդհանուր գումարից գանձվող, ինչպես նաև գույքի արժեքաճի վրա տարածվող հարկերը:

3. Սույն Համաձայնագիրը կիրառվում է մասնավորապես հետևյալ գործող հարկերի նկատմամբ.

ա) Խորվաթիայում՝
i) շահութահարկ,
ii) եկամտահարկ,
iii) տեղական եկամտահարկ և այս հարկերից մեկից գանձված ցանկացած այլ տուգանք
(այսուհետ՝ խորվաթական հարկ).

բ) Հայաստանում՝
i) շահութահարկ,
ii) եկամտահարկ
(այսուհետ՝ հայկական հարկ):

4. Սույն Համաձայնագիրը կիրառվում է նաև ցանկացած նույնատիպ կամ էապես համանման հարկերի նկատմամբ, որոնք սահմանվում են սույն Համաձայնագրի ստորագրումից հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ծանուցում են միմյանց իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին:

## Հոդված 3
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով, եթե ենթատեքստն այլ բան չի պահանջում.

ա) «Խորվաթիա» տերմինը նշանակում է՝ Խորվաթիայի Հանրապետության տարածք, ինչպես նաև տարածքային ծովի արտաքին սահմանին հարակից ծովային տարածքները՝ ներառյալ ծովի հատակը և նրա ընդերքը, որի նկատմամբ Խորվաթիայի Հանրապետությունը, միջազգային իրավունքի և Խորվաթիայի Հանրապետության օրենքների համաձայն, իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավասությունները.

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետություն, և երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ տարածք, ներառյալ ցամաքային, ջրային տարածքը, ընդերքը և օդային տարածքը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը, միջազգային իրավունքի և ներպետական օրենսդրության համաձայն, իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավասությունը.

գ) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները, ենթատեքստից կախված, նշանակում են Խորվաթիա կամ Հայաստան.

դ) «անձ» տերմինը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում.

ե) «ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ.

զ) «ձեռնարկություն» տերմինը կիրառվում է ցանկացած ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ.

է) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն.

ը) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ ձեռնարկության կողմից շահագործվող ցանկացած փոխադրում ծովային, գետային, օդային կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցներով, որի փաստացի կառավարման վայրը Պայմանավորվող պետությունում է, բացառությամբ, երբ ծովային, գետային, օդային կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև.

թ) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է՝

i) Խորվաթիայում՝ ֆինանսների նախարար կամ նրա լիազորած ներկայացուցիչ.

ii) Հայաստանում՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար և Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետ կամ նրանց լիազորած ներկայացուցիչներ.

4. Սույն Համաձայնագիրը կիրառվում է նաև ցանկացած նույնատիպ կամ էապես համանման հարկերի նկատմամբ, որոնք սահմանվում են սույն Համաձայնագրի ստորագրումից հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ծանուցում են միմյանց իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին:

## Հոդված 3
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով, եթե ենթատեքստն այլ բան չի պահանջում.

ա) «Խորվաթիա» տերմինը նշանակում է՝ Խորվաթիայի Հանրապետության տարածք, ինչպես նաև տարածքային ծովի արտաքին սահմանին հարակից ծովային տարածքները՝ ներառյալ ծովի հատակը և նրա ընդերքը, որի նկատմամբ Խորվաթիայի Հանրապետությունը, միջազգային իրավունքի և Խորվաթիայի Հանրապետության օրենքների համաձայն, իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավասությունները.

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետություն, և երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ տարածք, ներառյալ ցամաքային, ջրային տարածքը, ընդերքը և օդային տարածքը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը, միջազգային իրավունքի և ներպետական օրենսդրության համաձայն, իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավասությունը.

գ) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները, ենթատեքստից կախված, նշանակում են Խորվաթիա կամ Հայաստան.

դ) «անձ» տերմինը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում.

ե) «ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ.

զ) «ձեռնարկություն» տերմինը կիրառվում է ցանկացած ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ.

է) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն.

ը) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ ձեռնարկության կողմից շահագործվող ցանկացած փոխադրում ծովային, գետային, օդային կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցներով, որի փաստացի կառավարման վայրը Պայմանավորվող պետությունում է, բացառությամբ, երբ ծովային, գետային, օդային կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև.

թ) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է՝

i) Խորվաթիայում՝ ֆինանսների նախարար կամ նրա լիազորած ներկայացուցիչ.

ii) Հայաստանում՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար և Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետ կամ նրանց լիազորած ներկայացուցիչներ.

ժ) «քաղաքացի» տերմինը նշանակում է՝

i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ.

ii) Պայմանավորվող պետության գործող օրենքների հիման վրա իր՝ որպես այդպիսին կարգավիճակն ստացած ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ ասոցիացիա.

ժա) «ձեռնարկատիրական գործունեություն» տերմինը ներառում է մասնագիտական ծառայությունների և անկախ բնույթի այլ գործունեության իրականացումը:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն Համաձայնագիրը ցանկացած պահի կիրառվելիս նրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե ենթատեքստն այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որն այն ունի այդ պահին այդ պետության օրենսդրությամբ այն հարկերի նկատմամբ, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը, ընդ որում՝ այդ պետությունում գործող հարկային օրենքներով սահմանված յուրաքանչյուր նշանակություն գերակայում է այդ պետության այլ օրենքներով այդ տերմինին տրվող նշանակության նկատմամբ:

## Հոդված 4
## ՌԵԶԻԴԵՆՏԸ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որը, այդ պետության օրենքների համաձայն, ենթակա է հարկման այդ պետությունում իր մշտական բնակության, ռեզիդենտության, կառավարման վայրի կամ ցանկացած այլ համանման չափանիշի հիման վրա, և ներառում է նաև այդ պետությունը և նրա իշխանության ցանկացած տեղական մարմինը: Սակայն այդ տերմինը չի ներառում որևէ անձ, որն այդ պետությունում ենթակա է հարկման միայն այդ պետության աղբյուրներից ստացած եկամտի նկատմամբ:

2. Այն դեպքում, երբ 1-ին պարբերության դրույթների հիման վրա ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպով.

ա) նա համարվում է միայն այն պետության ռեզիդենտը, որտեղ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան. իսկ եթե նա երկու պետություններում էլ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն պետության ռեզիդենտը, որի հետ իր անձնական և տնտեսական կապերը (կենսական շահերի կենտրոնն) առավել սերտ են.

բ) եթե հնարավոր չէ որոշել այն պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա պետություններից ոչ մեկում իր տրամադրության տակ չունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն պետության ռեզիդենտը, որտեղ սովորաբար բնակվում է.

գ) եթե նա սովորաբար երկու պետություններում էլ բնակվում է, կամ եթե նա սովորաբար չի բնակվում դրանցից ոչ մեկում, ապա համարվում է միայն այն պետության ռեզիդենտը, որի քաղաքացին է.

դ) եթե նա հանդիսանում է երկու պետությունների քաղաքացի կամ դրանցից ոչ մեկի քաղաքացի չէ, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ 1-ին պարբերության դրույթների հիման վրա ֆիզիկական ան-

ձից տարբերվող այլ անձը որպես այդպիսին գրանցված է երկու Պայմանավորվող պետություններում, ապա նա համարվում է այն պետության ռեզիդենտ, որտեղ գտնվում է նրա փաստացի կառավարման վայրը: Ֆիզիկական անձից տարբերվող անձի փաստացի կառավարման վայրի գտնվելու անորոշության դեպքում իրավասու մարմինները փորձում են համաձայնության գալ այդպիսի անձի փաստացի կառավարման վայրի գտնվելու հարցի շուրջ:

## Հոդված 5
## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով «տնտեսական գործունեության իրականացման վայր» տերմինը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասնակիորեն իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Տնտեսական գործունեության իրականացման վայր» տերմինը ներառում է. հատկապես.

ա) կառավարման վայր,
բ) մասնաճյուղ,
գ) գրասենյակ,
դ) գործարան,
ե) արհեստանոց,
զ) որպես առևտրի կետեր օգտագործվող տարածքներ, և
է) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. Շինարարական հրապարակը կամ կառուցման կամ տեղակայման ծրագիրը կազմում է տնտեսական գործունեության իրականացման վայր միայն այն դեպքում, երբ դրա տևողությունը գերազանցում է վեցամսյա ժամանակահատվածը:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ պարբերությունների դրույթներին՝ տնտեսական գործունեության իրականացման վայր տերմինը չի ներառում.

ա) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի՝ բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով.
բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով.
գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը այլ ձեռնարկության կողմից բացառապես մշակման նպատակով.
դ) ձեռնարկության համար գործունեության կայուն վայրի պահպանումը բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով.
ե) գործունեության կայուն վայրի պահպանումը բացառապես ձեռնարկության համար նախապատրաստական կամ օժանդակ բնույթի որևէ այլ գործունեություն իրականացնելու նպատակով.
զ) գործունեության կայուն վայրի պահպանումը բացառապես ա-ե ենթապարբերություններում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ այդ համակցության արդյունքում

գործունեության կայուն վայրի ամբողջական գործունեությունը նախապատրաստական կամ օժանդակ բնույթի է:

5. Չնայած 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթներին՝ այն դեպքում, երբ անձը, որը չի հանդիսանում անկախ կարգավիճակով գործակալ (որին վերաբերում է 6-րդ պարբերությունը), գործում է ձեռնարկության անունից և ունի ու սովորաբար օգտագործում է Պայմանավորվող պետությունում ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասությունը, ապա համարվում է, որ այդ ձեռնարկության տնտեսական գործունեության իրականացման վայրը այդ պետությունում է այդ անձի կողմից տվյալ ձեռնարկության համար իրականացվող ցանկացած գործունեության մասով, եթե այդպիսի անձի գործունեությունը չի սահմանափակվում 4-րդ պարբերությունում նշվածով, որը եթե անգամ իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, այդ պարբերության դրույթների համաձայն՝ այդ գործունեության կայուն վայրը չի վերածում տնտեսական գործունեության իրականացման վայրի:

6. Չի համարվում, որ ձեռնարկության տնտեսական գործունեության իրականացման վայրը Պայմանավորվող պետությունում է միայն այն պատճառով, որ իր ձեռնարկատիրական գործունեությունը այդ պետությունում իրականացնում է բրոքերի, գլխավոր կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս պետությունում (տնտեսական գործունեության իրականացման վայրի միջոցով կամ այլ կերպով), ինքնին այդ ընկերություններից որևէ մեկին չի դարձնում մյուսի տնտեսական գործունեության իրականացման վայր:

## Հոդված 6
## ԵԿԱՄՈՒՏԸ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ

1. Պայմանվորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացված եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինը ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենքով, որտեղ գտնվում է տվյալ գույքը: Տերմինն ամեն դեպքում ներառում է անշարժ գույքի օժանդակ գույքը, գյուղացիական կամ անտառային տնտեսություններում օգտագործվող անասունների գլխաքանակը և սարքավորումները, հողային գույքին վերաբերող ընդհանուր օրենքում կիրառվող իրավունքները, անշարժ գույքի ուզուֆրուկտը և փոփոխական կամ հաստատագրված վճարումների իրավունքները՝ հաշվի առնելով հանքաշերտերում, աղբյուրներում և այլ բնական պաշարների հանքերում աշխատելու համար կամ աշխատանքի իրավունքը: Ծովային, գետային, օդային և ավտոմոբիլային փոխադրամիջոցները որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին պարբերության դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տալու դիմաց կամ ցանկացած այլ ձևով

օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին եւ 3-րդ պարբերությունների դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից եկամուտների նկատմամբ:

## Հոդված 7
## ՇԱՀՈՒՅԹԸ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ պետությունում, եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող տնտեսական գործունեության իրականացման վայրի միջոցով: Եթե ձեռնարկությունը իր ձեռնարկատիրական գործունեությունը իրականացնում է վերը նշված ձևով, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ տնտեսական գործունեության իրականացման վայրին:

2. Պահպանելով 3-րդ պարբերության դրույթները՝ եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող տնտեսական գործունեության իրականացման վայրի միջոցով, ապա Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում այդ տնտեսական գործունեության իրականացման վայրին է վերագրվում այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե լիներ նույնպիսի կամ համանման պայմաններում, նույնպիսի կամ համանման գործունեություն իրականացնող՝ միանգամայն ինքնուրույն և առանձին ձեռնարկություն և գործեր լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի տնտեսական գործունեության իրականացման վայրն է հանդիսանում:

3. Տնտեսական գործունեության իրականացման վայրի շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցնել տնտեսական գործունեության իրականացման վայրի նպատակներով կատարված ծախսերը, այդ թվում՝ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն հանգամանքից՝ կատարված են դրանք այն պետությունում, որտեղ գտնվում է այդ տնտեսական գործունեության իրականացման վայրը, թե այլ տեղ:

4. Եթե Պայմանավորվող պետությունում ընդունված է տնտեսական գործունեության իրականացման վայրին վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության տարբեր ենթամասերի միջև ձեռնարկության ընդհանուր շահույթի համամասնական բաշխման հիման վրա, ապա 2-րդ պարբերությունը բացարձակ չի արգելում այդ Պայմանավորվող պետությանը որոշել հարկման ենթակա շահույթը բաշխման այդպիսի ընդունված եղանակով: Այնուամենայնիվ, ընդունված բաշխման եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածի սկզբունքներին:

5. Տնտեսական գործունեության իրականացման վայրի կողմից ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնումը հիմք չի հանդիսանում այդ տնտեսական գործունեության իրականացման վայրին որևէ շահույթ վերագրելու համար:

6. Նախորդ պարբերությունների նպատակներով տնտեսական գործունեության

իրականացման վայրին վերագրվող շահույթը ամեն տարի որոշվում է նույն եղանակով, քանի դեռ չկա այն փոխելու հիմնավոր և բավարար պատճառ:

7. Այն դեպքում, երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնք առանձին քննարկված են սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա այդ հոդվածի դրույթները չեն ազդում սույն հոդվածների դրույթների վրա:

## Հոդված 8
## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում ծովային, գետային, օդային նավերի կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի կառավարման վայրը:

2. Եթե ծովային ձեռնարկության կամ ներքին ջրերի տրանսպորտային ձեռնարկության փաստացի կառավարման վայրը գտնվում է ծովային կամ գետային նավի վրա, ապա համարվում է, որ այն գտնվում է այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ծովային կամ գետային նավի գրանցման պետության նավահանգիստը, կամ, եթե գոյություն չունի այդպիսի նավահանգիստ, այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է նավի կամ նավակի օպերատորը:

3. 1-ին պարբերության դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ գործունեությունում կամ միջազգային շահագործող գործակալությունում մասնակցությունից ստացած շահույթի նկատմամբ:

## Հոդված 9
## ԱՍՈՑԻԱՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Այն դեպքում, երբ՝

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը հաշվեգրված կլիներ նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով նման ձևով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար, հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունը այդ պետության ձեռնարկության շահույթի կազմում ընդգրկում է և, համապատասխանաբար, հարկում այն շահույթը, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս պետությունում, և այդ ձևով նե-

բառված շահույթի բոլոր տարրերը համարվում են շահույթ, որը պետք է հաշվեգրված լիներ առաջինը հիշատակված պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև փոխհարաբերությունները լինեին նույնպիսին, ինչպիսին անկախ ձեռնարկությունների միջև, ապա այդ մյուս պետությունը կատարում է այդպիսի շահույթից իր կողմից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի են առնվում սույն Համաձայնագրի մյուս դրույթները, և Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում խորհրդակցում են միմյանց հետ:

## Հոդված 10
## ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. ա) Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժինները վճարող ընկերությունը՝ այդ պետության օրենքների համաձայն, բայց եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի շահաբաժինների համախառն գումարի 10 տոկոսը:

բ) Անկախ «ա» ենթապարբերության դրույթներից՝ Պայմանավորվող պետության շահաբաժիններ վճարող ռեզիդենտ ընկերությունն ազատվում է հարկից, երբ այդ ընկերության կողմից շահաբաժինները վճարվում են այն ընկերությանը, որի գույքն ամբողջությամբ կամ մասամբ բաժանված է բաժնեմասերի, քանի դեռ.

i) շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, և

ii) ուղղակի կամ անուղղակի տնօրինում է այդ վճարմանը նախորդող երկու օրացուցային տարիների ընթացքում շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալի առնվազն 25 տոկոսը, և

iii) այդպիսի շահաբաժինները ենթակա չեն շահութահարկով հարկման մյուս Պայմանավորվող պետությունում:

Պայմանավորվող պետության իրավասու մարմինները այս սահմանափակումների կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

Սույն պարբերությունը չի ազդում ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից, հիմնադիրների բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպիսին բաժնետոմսերից եկամուտը՝ համաձայն այն պետության օրենքների, որի ռեզիդենտն է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պե-

տուքյունում, որի ռեզիդենտն է շահաբաժիններ վճարող ընկերությունը, այնտեղ գտնվող տնտեսական գործունեության իրականացման վայրի միջոցով, և մասնակցությունը, որի կապակցությամբ վճարվում են շահաբաժինները, փաստորեն կապված է այդպիսի տնտեսական գործունեության իրականացման վայրի հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունում, ապա այդ մյուս պետությունը չի կարող հարկման ենթարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները՝ բացառությամբ, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, փաստորեն կապված է այդ մյուս պետությունում գտնվող տնտեսական գործունեության իրականացման վայրի հետ, և չի կարող ընկերության չբաշխված շահույթը ենթարկել հարկման ընկերության չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

Հոդված 11
ՏՈԿՈՍՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջանում են՝ այդ պետության օրենքների համաձայն. բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը:

Պայմանավորվող պետության իրավասու մարմինները այդ սահմանափակումների կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

3. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջից, անկախ հիպոտեկային ապահովումից և անկախ պարտապանի շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից և, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից՝ ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարներն ու մրցանակները: Ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը սույն հոդվածի նպատակներով որպես տոկոսներ չեն դիտարկվում:

4. 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող տնտեսական գործունեության իրականացման վայրի միջոցով, և պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, փաստորեն կապված է այդպիսի

տնտեսական գործունեության իրականացման վայրի հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ պետության ռեզիդենտ է: Սակայն այն դեպքում, երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի տնտեսական գործունեության իրականացման վայր, որի կապակցությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի տնտեսական գործունեության իրականացման վայրը, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն պետությունում, որտեղ գտնվում է տնտեսական գործունեության իրականացման վայրը:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի եւ փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան` հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

## Հոդված 12
## ՌՈՅԱԼԹԻՆ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից փաստացի տնօրինված ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն այդպիսի ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ այն առաջանում է` այդ պետության օրենքներին համապատասխան. բայց եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիի համախառն գումարի 5 տոկոսը: Պայմանավորվող պետության իրավասու մարմինները այս սահմանափակման կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

3. «Ռոյալթի» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է` փոխհատուցման ձևով ստացած ցանկացած տեսակի վճարում գրական, արվեստաբանական կամ գիտական աշխատանքների, ներառյալ կինոնկարների կամ ռադիո- կամ հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման համար օգտագործվող ֆիլմերի, ձայներիզների կամ սկավառակների, ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, արդյունաբերական նմուշի կամ մոդելի, կամ գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորման կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար:

4. 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին, այնտեղ գտնվող տնտեսական գործունեության իրականացման վայրի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում է ռոյալթին, փաստորեն կապված են այդպիսի տնտեսական գործունեության իրականացման վայրի հետ: Այդ դեպքերում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է: Սակայն այն դեպքում, երբ ռոյալթի վճարող անձի, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, տնտեսական գործունեության իրականացման վայրը Պայմանավորվող պետությունում է, որի կապակցությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթիի վճարման ծախսերը կրում է այդպիսի տնտեսական գործունեության իրականացման վայրը, ապա այդպիսի ռոյալթին համարվում է առաջացած այն պետությունում, որտեղ գտնվում է տնտեսական գործունեության իրականացման վայրը:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

## Հոդված 13
## ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱՃԸ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ 6-րդ հոդվածում նշված և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից ստացած արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած տնտեսական գործունեության իրականացման վայրի ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի՝ ներառյալ այդպիսի տնտեսական գործունեության իրականացման վայրի (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) օտարումից արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում ծովային, գետային, օդային նավերի կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների կամ այդպիսի ծովային, օդային նավերի, ավտոմոբիլային փոխադրամիջոցների կամ նավակների շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի կառավարման վայրը:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից բաժնետոմսերի օտարումից ստացած արժեքի հավելաճը, որի արժեքի ավելի քան 50 տոկոսն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջանում է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ մյուս պետությունում

5. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններում չնշված ցանկացած գույքի օտարումից արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում օտարող անձը:

## Հոդված 14
## ԵԿԱՄՈՒՏԸ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

1. Պահպանելով 15-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունը ենթակա են հարկման միայն այդ պետությունում, եթե այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքն իրականացվում է այդ կերպով, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Չնայած 1-ին պարբերության դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված պետությունում, եթե.

ա) ստացողը դիտարկվող ֆինանսական տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամկետում գտնվում է մյուս պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամկետի կամ ժամկետների ընթացքում, և

բ) վարձատրությունը վճարվում է մյուս պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի՝ մյուս պետությունում ունեցած տնտեսական գործունեության իրականացման վայրը:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, գետային, օդային կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության փաստացի կառավարման վայրը:

## Հոդված 15
## ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐԸ

Որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության տնօրենների խորհրդի կամ ընկերության հսկիչ խորհրդի անդամ՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

## Հոդված 16
## ԱՐՏԻՍՏՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

1. Չնայած 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործիչ, ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ իր իրականացրած անձնական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստի գործչի կամ մարզիկի, որպես այդպիսին, իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անհատապես արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:

3. 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթները չեն կիրառվում այն եկամտի նկատմամբ, որը արվեստի գործիչը կամ մարզիկը ստանում է Պայմանավորվող պետությունում իրականացրած գործունեությունից, եթե այդ պետություն այցելությունը ամբողջովին կամ մասամբ ֆինանսավորվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ նրա իշխանության տեղական մարմնի հանրային միջոցներից: Այդ դեպքում այդ եկամուտը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է արվեստի գործիչը կամ մարզիկը:

## Հոդված 17
## ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ

Պահպանելով 18-րդ հոդվածի 2-րդ պարբերության դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին նախկին վարձու աշխատանքի համար վճարված կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

## Հոդված18
## ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա իշխանության տեղական մարմնի կողմից այդ պետությանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված աշխատավարձերը, ռոճիկները և կենսաթոշակից տարբերվող այլ համանման վարձատրությունը ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

բ) Սակայն այդպիսի աշխատավարձերը, ռոճիկները և այլ համանման վարձատրությունը ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ պետությունում, և ֆիզիկական անձը այդ պետության ռեզիդենտն է, ով՝

i) այդ մյուս պետության քաղաքացի է, կամ

ii) չի դարձել այդ պետության ռեզիդենտ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Չնայած 1-ին պարբերության դրույթներին՝ Պայմանավորվող պետության

կամ նրա իշխանության տեղական մարմնի կողմից ստեղծված հիմնադրամներից ֆիզիկական անձին այդ պետությանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց վճարված կենսաթոշակները և այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաթոշակները կամ այլ համանման վարձատրությունը ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը այդ պետության ռեզիդենտն է ու քաղաքացին:

3. 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածների դրույթները կիրառվում են այն ծառայությունների մատուցման դիմաց ստացված աշխատավարձերի, ռոճիկների և այլ համանման վարձատրությունների և կենսաթոշակների նկատմամբ, որոնք կապված են Պայմանավորվող պետության կամ նրա իշխանության տեղական մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ:

## Հոդված 19
## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ուսանողը կամ փորձնակը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, և որը գտնվում է առաջինը հիշատակված պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, այդ մյուս պետությունում չի հարկվում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացված վճարումներից, եթե այդպիսի վճարումները առաջանում են այդ պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

## Հոդված 20
## ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որը մյուս Պայմանավորվող պետության կառավարության կողմից արտոնագրված՝ այդ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող համալսարանի, դպրոցի կամ այլ համանման հաստատության հրավերով ժամանակավորապես գտնվում է այդ մյուս Պայմանավորվող պետությունում բացառապես կրթական հաստատությունում դասավանդելու կամ հետազոտության մեջ ընդգրկվելու նպատակով, կամ երկու դեպքում էլ այդ մյուս Պայմանավորվող պետություն իր առաջին ժամանելու օրվանից երկու տարին չգերազանցող ժամանակահատվածի ընթացքում ազատվում է հարկումից այդ մյուս Պայմանավորվող պետությունում այդպիսի դասավանդման կամ հետազոտման համար իր ստացած վարձատրությունից:

2. 1-ին պարբերության համաձայն հետազոտության համար ստացված ցանկացած վարձատրության նկատմամբ ազատումը չի կիրառվում, եթե այդպիսի հետազոտությունն իրականացվում է ոչ հասարակական, այլ որոշակի անձի կամ անձանց մասնավոր շահերի համար:

## Հոդված 21
## ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏԸ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված եկամտի տարրերը, անկախ դրանց առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

2. 1-ին պարբերության դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող տնտեսական գործունեության իրականացման վայրի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվել է եկամուտը, իրապես կապված է այդպիսի տնտեսական գործունեության իրականացման վայրի կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

3. Չնայած 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված և մյուս Պայմանավորվող պետությունում առաջացած եկամտի տարրերը նույնպես կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

## Հոդված 22
## ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ

1. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտը եկամուտ է ստանում, որը, սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, առաջինը հիշատակված պետությունը թույլ է տալիս նվազեցնել այդ ռեզիդենտի եկամտի հարկից այդ մյուս պետությունում վճարված եկամտահարկին հավասար գումարը:

Սակայն յուրաքանչյուր դեպքում այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման տրամադրումը հաշվարկված եկամտահարկի այն մասը, որը վերագրելի է այն եկամտին, որը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Այն դեպքում, երբ, սույն Համաձայնագրի ցանկացած դրույթին համապատասխան, Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը ազատվում է այդ պետությունում հարկումից, այդ պետությունը, այնուամենայնիվ, այդպիսի ռեզիդենտի եկամտի մնացած մասի վրա դրվող հարկի գումարը հաշվարկելիս կարող է հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը:

## Հոդված 23
## ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

1. Պայմանավորվող պետության ազգային անձինք չեն ենթարկվում մյուս Պայմանավորվող պետությունում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, մասնավորապես, կապված ռեզիդենտության հետ, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց միևնույն հանգամանքների դեպքում ենթարկվում կամ կարող են ենթարկվել այդ մյուս պետության քաղաքացիները: Չնայած 1-ին հոդվածի դրույթներին՝ սույն դրույթը կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող պետություններից որևէ մեկի ռեզիդենտ համարվող՝ քաղաքացիություն չունեցող անձինք չեն ենթարկվում Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության կատարման, քան այն հարկումը և դրա հետ կապված պարտավորության կատարումն է, որին ենթակա են այդ պետությունների

քաղաքացիները միևնույն պայմանների դեպքում:

3. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած տնտեսական գործունեության իրականացման վայրի հարկումը այդ մյուս պետությունում չպետք է լինի պակաս բարենպաստ, քան համանման գործունեություն իրականացնող՝ այդ մյուս պետության ձեռնարկությունների հարկումը: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա հարկման նպատակներով այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ և զեղչեր տրամադրել, ինչպիսիք Պայմանավորվող պետությունը շնորհում է իր սեփական ռեզիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին պարբերության, 11-րդ հոդվածի 6-րդ պարբերության կամ 12-րդ հոդվածի 6-րդ պարբերության դրույթները, Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները, ռոյալթին և այլ վճարումները այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչպես առաջինը հիշատակված պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտքը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին այդ ձեռնարկության հարկման ենթակա գույքի որոշման նպատակով ենթակա է նվազեցման նույն պայմաններով, ինչպես պարտքը առաջինը հիշատակված պետության ռեզիդենտին:

5. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կամ ուղղակի կամ անուղղակի վերահսկվում է այդ մյուս պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է առաջինը հիշատակված պետությունում ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարման, քան առաջինը հիշատակված պետության այլ նման ձեռնարկությունները:

6. Չնայած 2-րդ հոդվածի դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կիրառվում են հարկերի ցանկացած տեսակի և ձևի նկատմամբ:

## Հոդված 24
## ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման, ապա նա կարող է, այդ պետությունների ներքին օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ եթե իր գործը վերաբերում է սույն Համաձայնագրի 24-րդ հոդվածի 1-ին պարբերությանը, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի քաղաքացին է հանդիսանում: Այդպիսի գործը ներկայացվում է սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը դիմում-բողոքը համարում է արդարացի, և եթե ինքն ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա նա ձգտում է խնդիրը լուծել մյուս

Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ սույն Համաձայնագրին չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ցանկացած ձեռք բերված համաձայնություն իրականացվում է անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենքում առկա որևէ ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացած ցանկացած դժվարություն կամ կասկած պետք է ձգտեն լուծել փոխհամաձայնությամբ: Նրանք կարող են նույնպես խորհրդակցել միմյանց հետ՝ Համաձայնագրով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Նախորդ պարբերությունների առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են ուղղակի կապ հաստատել միմյանց հետ. ներառյալ՝ իրենցից կամ իրենց ներկայացուցիչներից կազմված համատեղ հանձնաժողովի միջոցով:

## Հոդված 25
## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխանակում են տեղեկություններ՝ անհրաժեշտ սույն Համաձայնագրի դրույթների կամ Պայմանավորվող պետությունների կամ նրանց իշխանության տեղական մարմինների անունից սահմանված ցանկացած տեսակի և բնույթի հարկին առնչվող ներքին օրենքների վարչարարության կամ հարկադիր կատարման համար՝ այնքանով, որքանով հարկումը չի հակասում Համաձայնագրին: Տեղեկությունների փոխանակումը չի սահմանափակվում 1-ին և 2-րդ հոդվածներով:

2. 1-ին պարբերության համաձայն Պայմանավորվող պետության ստացած ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի այնքանով, որքանով այդ պետության ներքին օրենքների սահմաններում ստացված տեղեկությունը. և դրա մասին տեղեկացվում են միայն այն անձինք կամ մարմինները (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղված են 1-ին պարբերությունում նշված հարկերի գնահատմամբ կամ հավաքագրմամբ, հարկադիր գանձմամբ կամ դատական հետապնդմամբ, կամ դրանց հետ կապված բողոքարկումների քննարկմամբ, կամ վերը նշված գործառույթների վերահսկմամբ: Այդպիսի անձինք կամ մարմինները տեղեկությունն օգտագործում են միայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունները բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ:

3. 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝

ա) իրականացնել այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին և վարչական գործունեությանը հակասող վարչական միջոցառումներ.

բ) ներկայացնել տեղեկություն, որը հասանելի չէ այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ սովորական վարչական գործավարության ընթացքում.

գ) ներկայացնել տեղեկություն, որը բացահայտում է որևէ առևտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, կոմերցիոն կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց, կամ՝ տեղեկություն, որի բացահայտումը հակասում է պետ-

տական կարգին:

4. Եթե տեղեկությունը պահանջվում է Պայմանավորվող պետության կողմից սույն հոդվածին համապատասխան, մյուս Պայմանավորվող պետությունը պետք է օգտագործի իր տեղեկությունների հավաքման միջոցները՝ պահանջվող տեղեկությունը ստանալու համար, եթե նույնիսկ այդ մյուս պետությունն իր սեփական հարկային նպատակների համար չունի այդպիսի տեղեկության անհրաժեշտություն: Նախորդ նախադասության մեջ պարունակվող պարտավորությունը սահմանափակվում է 3-րդ պարբերությունով, բայց ոչ մի դեպքում այդպիսի սահմանափակումները չպետք է մեկնաբանվեն որպես իրավունք տվող Պայմանավորվող պետությանը՝ մերժել տեղեկության տրամադրումը միայն այն պատճառով, որ ինքը չունի ներքին հետաքրքրություն այդպիսի տեղեկության մեջ:

5. 3-րդ պարբերության դրույթները ոչ մի դեպքում չեն մեկնաբանվում որպես իրավունք տվող Պայմանավորվող պետությանը՝ մերժել տեղեկության տրամադրումը միայն այն պատճառով, որ տեղեկությունը տնօրինվում է բանկի, այլ ֆինանսական հաստատության, հավատարմագրված անձի կամ գործակալությունում կամ հոգեբարձուի միավորում գործող անձի կողմից, կամ վերաբերում է անձի սեփականության շահերին:

### Հոդված 26
### ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնությունների վրա:

### Հոդված 27
### ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դիվանագիտական ուղիներով ծանուցումներից վերջինը ստանալու օրվանից 30 օր հետո, որով Պայմանավորվող պետություններից մեկը տեղեկացնում է մյուսին սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի կատարման մասին:
Սույն Համաձայնագիրը երկու Պայմանավորվող պետություններում գործում է.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո ստացված եկամուտների նկատմամբ.

բ) եկամտի այլ հարկերի առնչությամբ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող յուրաքանչյուր հարկային տարում վճարման ենթակա հարկերի նկատմամբ:

## Հոդված 28
## ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Սույն Համաձայնագիրը մնում է ուժի մեջ մինչև Պայմանավորվող պետություններից մեկի կողմից դիվանագիտական ուղիներով մյուս Պայմանավորվող պետությանը Համաձայնագրի դադարեցման մտադրության մասին գրավոր ծանուցումը՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարի ժամանակաշրջանի ավարտից հետո ցանկացած օրացուցային տարվա հունիսի 30-ին կամ մինչև հունիսի 30-ը:

Այդ դեպքում սույն Համաձայնագիրը դադարեցնում է իր գործողությունը.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ գործողության դադարեցման ծանուցումը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո ստացված եկամուտների նկատմամբ.

բ) եկամտի այլ հարկերի առնչությամբ՝ գործողության դադարեցման ծանուցումը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող յուրաքանչյուր հարկային տարում վճարման ենթակա հարկերի նկատմամբ:

**Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝** ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Երևան քաղաքում 2009 թվականի մայիսի 22-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, խորվաթերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնության դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ | ԽՈՐՎԱԹԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ |
|---|---|

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Հայաստանի Հանրապետության և Խորվաթիայի Հանրապետության միջև

Հայաստանի Հանրապետությունը և Խորվաթիայի Հանրապետությունը --------------------------- --------------- երկու պետությունների միջև «Եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» Համաձայնագրի ստորագրման պահին համաձայնեցին վերը նշված Համաձայնագրի անբաժան մաս կազմող հետևյալ դրույթների առնչությամբ.

I. 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության առնչությամբ.

համաձայնեցված է, որ սոցիալական ապահովության վճարները կամ ցանկացած այլ համանման վճար չեն դիտվում որպես հարկեր եկամտից:

II. 3-րդ հոդվածի 1-ին պարբերության «ը» ենթապարբերության,
4-րդ հոդվածի 3-րդ պարբերության,
8-րդ հոդվածի 1-ին պարբերության 2-րդ ենթապարբերության,
13-րդ հոդվածի 3-րդ պարբերության,
14-րդ հոդվածի 3-րդ պարբերության

առնչությամբ համաձայնեցված է, որ «փաստացի կառավարման վայր» ստեղծելու ժամանակ հաշվի առնվող պայմաններն են, մասնավորապես, վայրը, որտեղից ընկերությունը փաստացի կառավարվում և հսկվում է, վայրը, որը ընկերության կառավարման ընթացքում տնտեսական և գործնական տեսակետից առաջատար դեր է խաղում, և վայրը, որտեղ պահվում են կարևոր հաշվապահական գրքեր:

III. 5-րդ հոդվածի 4-րդ պարբերության առնչությամբ.

համաձայնեցված է, որ «առաքում» տերմինը չի ներառում հետևյալ դեպքերը.

ա) ցանկացած ցուցահանդես-վաճառքի ընթացքում ցուցադրված արտադրանքի վաճառքը՝ դրա ավարտից հետո.

բ) ապրանքների առաքման համար շինության ներսում պահվող՝ վաճառքի համար օգտագործվող ցանկացած խանութ:

Կատարված է Երևան քաղաքում 2009 թվականի մայիսի 22 -ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, խորվաթերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնության դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ | ԽՈՐՎԱԹԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ |
|---|---|
| [signature] | [signature] |